ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.11.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/156

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 17.10.2018թ. թիվ 01.1/26-3/18739-18 գրությամբ «Վահրամ Առաջին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) 09.10.2018թ. թիվ 1/18-2/59739-18 գրության հիման վրա, 17.10.2018թ. թիվ 01.1/26-3/18739-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Վահրամ Առաջին» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Վահրամ Առաջին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «Վահրամ Առաջին» ՍՊԸ-ի կողմից գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Վահրամ Առաջին» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/156 ընթացակարգի շրջանակներում 23.10.2018թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ «Վահրամ Առաջին» ՍՊԸ-ի և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջև կնքվել է ՀՀ ՊԵԿ Երևան քաղաքի Ահարոնյան 12/3 հասցեի մասնաշենքի վերանորոգման աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր: Հետագայում վերը նշված պայմանագրում փոփոխություններ կատարելու նպատակով 11.07.2018թ. կողմերի միջև կնքվել է Համաձայնագիր 1-ը, որի շրջանակներում Ընկերությունը մոտավորապես 258 000 ՀՀ դրամի կատարված աշխատանքների կատարողականը ուղարկել է Պատվիրատուին, սակայն վերջինս ինչ-ինչ պատճառաբանություններով ձգձգել և չի ստորագրել կատարողականը, որն էլ ըստ էության խոչընդոտ է հանդիսացել Ընկերության համար՝ պայմանագրով նախատեսված հետագա աշխատանքները կատարելու մասով:

3. **<u>ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 09.10.2018թ. թիվ 1/18-2/59739 գրությամբ հայտնել է, որ համաձայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի և «Վահրամ Առաջին» ՍՊԸ-ի միջևՀՀ ՊԵԿ Երևան քաղաքի Ահարոնյան 12/3 հասցեի մասնաշենքի վերանորոգման աշխատանքների կատարման համար 2018 թվականի հունվարի 18-ին կնքված թիվ ՀՀԿԱ-ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-(18/1Վ)-3 ծածկագրով «Պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման» պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագրի) թիվ 2 հավելվածով՝

օրացուցային գրաֆիկով (Համաձայնագրի կնքման ամսաթիվ՝ 11.07.2018թ.) նախատեսված ժամկետում և Պայմանագրի 1.1 կետով սահմանված՝ «Վահրամ Առաջին» ՍՊԸ-ն պարտավոր էր մինչև 2018 թվականի սեպտեմբերի 21-ը կատարեր 4 257 130 ՀՀ դրամի աշխատանքներ, սակայն մինչև նշված ժամկետը կատարել է 391 040 ՀՀ դրամի աշխատանքներ:

Պայմանագրով սահմանված ժամկետում վերը նշված աշխատանքները «Վահրամ Առաջին» ՍՊԸ-ի կողմից չեն կատարվել և խախտվել են Պայմանագրի էական պայմանները, հետևաբար Պայմանագրի 3.1.4 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն ստիպված է եղել միակողմանի մասնակի լուծել Պայմանագիրը 3 866 090 ՀՀ դրամ չկատարված աշխատանքների մասով:

Հիմք ընդունելով՝ Պայմանագրի 3.1.4 ենթակետի «ա» և «բ» պարբերությունների պահանջները՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 2018 թվականի հոկտեմբերի 5-ից միակողմանի մասնակի լուծել է 2018 թվականի հունվարի 25-ին կնքված թիվ ՀՀԿԱ-ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-(18/1Վ)-3 ծածկագրով պայմանագիրը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/156 ընթացակարգի շրջանակներում 23.10.2018թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. ՍՑ-ԱՄ-2018/156 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2018/156 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի և «Վահրամ Առաջին» ՍՊԸ-ի միջև 25.01.2018թ. կնքվել է «ՀՀԿԱ-ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-(18/1Վ)-3» ծածկագրով գնման պայմանագիրը, որի համաձայն Ընկերությունը պարտավորվել է սույն պայմանագրով նախատեսված

ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված վերանորոգման աշխատանքներ:

2. Պայմանագրի 8.13 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով:

3. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի և «Վահրամ Առաջին» ՍՊԸ-ի միջև 11.07.2018թ. կնքվել է Համաձայնագիր 1-ը՝ 25.01.2018թ. կնքված «ՀՀԿԱ-ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-(18/1Վ)-3» ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին:

4. Պայմանագրի թիվ 2 հավելված օրացուցային գրաֆիկի համաձայն՝ նախատեսվել է կատարել Ահարոնյան 12/3 հասցեի մասնաշենքի վերանորոգման աշխատանքներ: Աշխատանքների կատարման սկիզբ է նախատեսվել համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը, իսկ աշխատանքների կատարման ավարտը նախատեսվել է համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 60 օրացուցային օրվա ընթացքում:

5. Պայմանագրի 3.4.1 ենթակետի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է աշխատանքների 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

6. Ընկերությանն ուղղված 17.09.2018թ. թիվ 1/18-3/54494-18 գրությամբ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն հայտնել է, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի և «Վահրամ Առաջին» ՍՊԸ-ի միջև ՀՀ ՊԵԿ Երևան քաղաքի Ահարոնյան 12/3 հասցեի մասնաշենքի վերանորոգման աշխատանքների կատարման համար ս/թ. հունվարի 25-ին կնքված թիվ «ՀՀԿԱ-ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-(18/1Վ)-3» ծածկագրով պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ժամկետն ավարտվում է 2018 թվականի սեպտեմբերի 21-ին, սակայն աշխատանքներն ամբողջությամբ ավարտված չեն:

Կատարված աշխատանքների ծավալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Պայմանագրով նախատեսված աշխատանքները հնարավոր չէ ավարտել սահմանված ժամկետում, հետևաբար՝ Պայմանագրից բխող տույժերի և տուգանքների կիրառումը Ընկերության նկատմամբ անխուսափելի է, ուստի առաջարկվում է սահմանված ժամկետում ավարտին հասցնել աշխատանքները և ապահովել Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:

7. Ընկերությանն ուղղված 05.10.2018թ. թիվ 1/18-2/59042-18 գրությամբ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն հայտնել է, որ Պայմանագրի թիվ 2 հավելվածով՝ Օրացուցային գրաֆիկով (համաձայնագրի կնքման ամսաթիվ՝ 11.07.2018թ.) նախատեսված ժամկետում և Պայմանագրի 1.1 կետով սահմանված՝ Ընկերությունը պարտավոր էր մինչև 2018 թվականի սեպտեմբերի 21-ը կատարեր 4 257 130 ՀՀ դրամի աշխատանքներ, սակայն մինչև նշված ժամկետը կատարել է 391 040 ՀՀ դրամի աշխատանքներ: ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 2018 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1/18-3/54494-18 գրությամբ նախազգուշացրել էր Ընկերությանը, որպեսզի Պայմանագրով նախատեսված պարտավորությունները կատարվեն, այլապես Պայմանագրից բխող տույժերի և տուգանքների կիրառումը Ընկերության նկատմամբ կլինեն անխուսափելի: Սակայն Պայմանագրով սահմանված ժամկետում վերը նշված աշխատանքները Ընկերության կողմից չեն կատարվել և խախտվել են Պայմանագրի էական պայմանները, ուստի հիմք ընդունելով պայմանագրի 3.1.4 ենթակետի «ա» և «բ» պարբերությունների պահանջները՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 2018 թվականի հոկտեմբերի 5-ից միակողմանի մասնակի լուծում է 2018 թվականի հունվարի 25-ին կնքված «ՀՀԿԱ-ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-(18/1Վ)-3» ծածկագրով պայմանագիրը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 17.10.2018թ. թիվ 01.1/26-3/18739-18 գրությունը, ՀՀ ԿԱ

պետական եկամուտների կոմիտեի 09.10.2018թ. թիվ 1/18-2/59739 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է՝ մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. ***խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված

բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի և «Վահրամ Առաջին» ՍՊԸ-ի միջև 25.01.2018թ. կնքվել է «ՀՀԿԱ-ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-(18/1Վ)-3» ծածկագրով գնման պայմանագիրը, որի համաձայն Ընկերությունը պարտավորվել է սույն պայմանագրով նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված վերանորոգման աշխատանքներ:

Մասնավորապես՝ 25.01.2018թ. կնքված «ՀՀԿԱ-ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-(18/1Վ)-3» ծածկագրով պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված վերանորոգման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Նույն պայմանագրի N 1 հավելված ծավալաթերթ-նախահաշիվ վերանորոգման աշխատանքների կատարման համաձայն՝ «Վահրամ Առաջին» ՍՊԸ-ն պարտավորվել է կատարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Ահարոնյան 12/3 հասցեի մասնաշենքի վերանորոգման աշխատանքներ:

Պայմանագրի 8.13 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի և «Վահրամ Առաջին» ՍՊԸ-ի միջև 11.07.2018թ. կնքվել է Համաձայնագիր 1-ը՝ 25.01.2018թ. կնքված «ՀՀԿԱ-ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-(18/1Վ)-3» ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին:

Պայմանագրի 1-ին կետի 1.3 ենթակետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագրի Հավելված N 2-ով սահմանված ժամկետներում:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

Պայմանագրի թիվ 2 հավելվածի Օրացուցային գրաֆիկի համաձայն՝ նախատեսվել է կատարել Ահարոնյան 12/3 հասցեի մասնաշենքի վերանորոգման աշխատանքներ: Աշխատանքների կատարման սկիզբ է նախատեսվել համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը, իսկ աշխատանքների կատարման ավարտը նախատեսվել է համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 60 օրացուցային օրվա ընթացքում:

Պայմանագրի 3.4.1 ենթակետի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է աշխատանքների 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

Ընկերությանն ուղղված 17.09.2018թ. թիվ 1/18-3/54494-18 գրությամբ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն հայտնել է, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի և «Վահրամ Առաջին» ՍՊԸ-ի միջև ՀՀ ՊԵԿ Երևան քաղաքի Ահարոնյան 12/3 հասցեի մասնաշենքի վերանորոգման աշխատանքների կատարման համար ս/թ. հունվարի 25-ին կնքված թիվ «ՀՀԿԱ-ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-(18/1Վ)-3» ծածկագրով պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ժամկետն ավարտվում է 2018 թվականի սեպտեմբերի 21-ին, սակայն աշխատանքներն ամբողջությամբ ավարտված չեն:

Կատարված աշխատանքների ծավալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Պայմանագրով նախատեսված աշխատանքները հնարավոր չէ ավարտել սահմանված ժամկետում, հետևաբար՝ Պայմանագրից բխող տույժերի և տուգանքների կիրառումը Ընկերության նկատմամբ անխուսափելի է, ուստի առաջարկվում է սահմանված ժամկետում ավարտին հասցնել աշխատանքները և ապահովել Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:

Ընկերությանն ուղղված 05.10.2018թ. թիվ 1/18-2/59042-18 գրությամբ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն հայտնել է, որ Պայմանագրի թիվ 2 հավելվածով՝ Օրացուցային գրաֆիկով (համաձայնագրի կնքման ամսաթիվ՝ 11.07.2018թ.) նախատեսված ժամկետում և Պայմանագրի 1.1 կետով սահմանված՝ Ընկերությունը պարտավոր էր մինչև 2018 թվականի սեպտեմբերի 21-ը կատարեր 4 257 130 ՀՀ դրամի աշխատանքներ, սակայն մինչև նշված ժամկետը կատարել է 391 040 ՀՀ դրամի աշխատանքներ: ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 2018 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1/18-3/54494-18 գրությամբ նախազգուշացրել էր Ընկերությանը, որպեսզի Պայմանագրով նախատեսված պարտավորությունները կատարվեն, այլապես Պայմանագրից բխող տույժերի և տուգանքների կիրառումը Ընկերության նկատմամբ կլինեն անխուսափելի: Սակայն Պայմանագրով սահմանված ժամկետում վերը նշված աշխատանքները Ընկերության կողմից չեն կատարվել և խախտվել են Պայմանագրի էական պայմանները, ուստի հիմք ընդունելով պայմանագրի 3.1.4 ենթակետի «ա» և «բ» պարբերությունների պահանջները՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 2018 թվականի հոկտեմբերի 5-ից միակողմանի մասնակի լուծում է 2018 թվականի հունվարի 25-ին կնքված «ՀՀԿԱ-ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-(18/14)-3» ծածկագրով պայմանագիրը:

Այսպես պայմանագրի 3.1.4 կետը սահմանում է, որ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե՝

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Այսպիսով, համաձայն՝ կողմերի միջև 25.01.2018թ. կնքված թիվ ՀՀԿԱ-ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-(18/1Վ)-3 ծածկագրով գնման պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման թիվ 1 արձանագրության՝ Ընկերության կողմից պայմանագրի շրջանակներում կատարվել է 285 379 ՀՀ դրամի աշխատանքներ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՍՑ-ԱՄ-2018/156 ընթացակարգի շրջանակներում ներկայացված տեղեկանքի համաձայն՝ Ընկերությունը Պայմանագրի շրջանակներում կատարել է 391 040 ՀՀ դրամի աշխատանքներ, որոնց համար ներկայացվել է կատարողական ակտ միայն 285 379 ՀՀ դրամի կատարված աշխատանքների մասով, իսկ մնացած 105 661 ՀՀ դրամի չափով կատարված աշխատանքների համար կատարողական ակտ չի ներկայացվել:

Ելնելով վերոգրյալից, գտնում եմ, որ «Վահրամ Առաջին» ՍՊԸ-ի կողմից խախտվել են Ընկերության և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի միջև 25.01.2018թ. կնքված «ՀՀԿԱ-ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-(18/1Վ)-3» ծածկագրով գնման պայմանագրով ստանձնած պարտավորությունները, քանի որ Ընկերությունը Պայմանագրի թիվ 2 հավելվածով նշված ժամկետում՝ այն է կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից՝ 11.07.2018թ.-ից հաշված 60 օրացուցային օրվա ընթացքում պարտավոր էր կատարել 4 257 130 ՀՀ դրամի աշխատանքներ, սակայն մինչև նշված ժամկետի ավարտը՝ ըստ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման թիվ 1 արձանագրության, կատարել է 285 379 ՀՀ դրամի աշխատանքներ, որի հետևանքով Պատվիրատուի կողմից միակողմանի մասնակի լուծվել է Պայմանագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 17.10.2018թ. թիվ 01.1/26-3/18739-18 գրությամբ «Վահրամ Առաջին» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 03539664) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Վահրամ Առաջին» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների, ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**